ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բրոքերը հաճախորդներից ընդունում է արտարժույթով գործարքների կատարման հանձնարարականները և հաղորդում է դրանք կատարման համար կամ կատարում է պատվերները հաճախորդի անունից և բացառապես Բրոքերի կողմից առաջարկվող հարթակների միջոցով:

2. Լավագույն կատարում. Բրոքերն ընդունում է, որ հարթակներում նշված գները, որոնցով գործարքներն իրականացվում են հենց այն գներն են, որոնցով, պրոֆեսիոնալ հաճախորդներին մատուցվում են գործարքների կատարման ծառայություններ: Համապատասխանաբար, Բրոքերը Հաճախորդների համար լավագույն արդյունքը ապահովելու համար ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ քայլերը գործարքների կատարման գները հստակ ներկայացնելու ուղղությամբ՝ հաշվի առնելով վճարման ենթակա ընդհանուր գումարը, ներկայացնելով ֆինանսական գործիքի արժեքը և կատարման հետ կապված բոլոր վճարները: Սույն քաղաքականությունը, այնուամենայնիվ, չի երաշխավորում, որ Բրոքերի կողմից նշված գներով կատարումը միշտ կհանդիսանա լավագույն գինը՝ համեմատած այլ տեղ առաջարկվող գներից:

3. Վճարները: Գործառնական ծախսերը կարող են ներկայացվել որպես mark-up կամ mark-down (պայմանագրի մյուս կողմի կողմից սկզբնական դիրքը բացելու և Ձեր համար գործարքի իրականացման գնի տարբերություն): Մենք կարող ենք նաև համաձայնվել գանձել միջնորդավճար կամ միջնորդավճարի և mark-up կամ mark-down-ի համակցություն: Բրոքերի վճարները հաշվի չեն առնվում կատարման լավագույն գները որոշելիս:

4. Կատարման վայր. Բրոքերի կողմից մատուցվող արտարժույթի, թանկարժեք մետաղների, գնային տարբերությունների պայմանագրերի ծառայություններ. Բրոքերի կողմից նշված գները սովորաբար բխում են լավագույն գլոբալ բանկերի կողմից մեծածախ շուկաներում արտարժույթի, ոսկու կամ գնային տարբերությունների պայմանագրերի համար առաջարկվող գներից, որոնք Բրոքերի համոզմամբ մշտապես Ձեզ լավագույն գները կտան:

5. Պատվերի կատարման ռիսկերը.

5.1. Սայթաքում (slippage). Մենք հոգում ենք, որ մեր ներկայացված գներով կատարումը Ձեզ համար կհանդիսանա լավագույն արդյունքը: Ինչևէ, արագ շարժվող շուկաները կարող են հանգեցնել նրան, որ գործարքի կատարման պահին Ձեր ցանկալի գինը արդեն չհանդիսանա շուկայական գին:

5.2. Տատանումներ. Նորություններից կամ տնտեսական իրադարձություններից հետո կարող են լինել շուկայական գների տեղաշարժեր, որոնք կարող են ազդել կատարվելիք պատվերների վրա: Հաճախորդները պետք է տեղյակ լինեն տատանվող շուկաների հետ կապված հետևյալ ռիսկերին.

5.2.1. Պատվերը կարող է կատարվել ներկայացված գնից էականորեն տարբերվող կամ պատվերը ստանալու պահին ներկայացված գնից էականորեն տարբերվող գնով:

Պատվերը կարող է նաև մասնակիորեն կատարվել կամ կարող է տարբեր չափերով տարբեր գներով կատարվել

5.2.2. Բացման գները կարող են էականորեն տարբերվել նախորդ օրվա փակման գներից:

5.3. **Առևտրային համակարգերի կամ ինտերնետ կապի հետ կապված կատարման հետաձգումներ.** Մեր հսկողությունից դուրս գտնվող պատվերների կատարման ուշացումները կարող են տեղի ունենալ հարթակների օգտագործման առնչությամբ ինտերնետ կապի խափանման կամ տեխնիկական խնդիրների, ինչպես նաև համակարգերի դանդաղ աշխատանքի հետևանքով, որի համար Բրոքերը պատասխանատվություն չի կրում:

5.4. **Ֆիդուցիար պարտավորության բացակայություն.** Մեր կողմից ստանձնած լավագույն կատարման պարտավորությունը չի նշանակում, որ մենք Ձեր հանդեպ ստանձնում ենք ֆիդուցիար պարտավորություններ, բացի նրանցից, որոնք սահմանված են կիրառվող օրենսդրությամբ կամ մեր միջև կնքված համաձայնագրով:

5.5. **Մոնիտորինգ և դիտարկում.** Մենք մոնիտորինգի կենթարկենք մեր կողմից պատվերների կատարման արդյունավետությունը՝ բացահայտելու և շտկելու համար բոլոր թերացումները: Մենք Ձեզ կտեղեկացնենք պատվերների կատարման քաղաքականության բոլոր էական փոփոխությունների մասին: